

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Բ.գ.թ., դոցենտ

ՈԳՈՒ ՏԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ. ՍՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ ԵՎ ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆ*

Բանալի բառեր – ոգու տուն, Մուշեղ Իշխան, Շուշանյան, լեզու, Հայ-դեզեր, ազգային բնավորություն, ազգային ճակատագիր, Հայկական սփյուռք:

Մուշեղ Իշխանի և Վազգեն Շուշանյանի գեղարվեստական համակարգերում տան խորհրդապատկերի առանձնահատուկ դերի, նկատվող ընդհանրությունների քննությունը երևան է հանում ազգային պատմափիլիսոփայության և հոգեկերտվածքի, աշխարհատեսության և կենսազգացողության հիմնարար դրսևորումներ՝ բացորոշելով ոգու տանը բնակվելու նախապատվության և վերաբնակվելու պարտադրանքի՝ մասամբ ազգային ճակատագրով և ազգային բնավորությամբ, մասամբ էլ համամարդկային չափումով հայտնակերպվող, աշխարհաքաղաքական տեղաշարժերով պայմանավորված իրողություններ:

Մուշեղ Իշխանի «Տուներու երգը» ժողովածուի (1936) խոհագագական մթնոլորտը կառուցակազմվում է մի քանի զույգային հակոտնյանների հենքով, որոնցից են ցրում-ցրվածությունը, սփռում-սփռվածությունը և հավաքումը, ավերում-ավերվածությունը և կառուցումը, լռությունը և ձայն-խոսքը, օտարը և հարազատը: Առաջին երկուսը նախ պատկերավորվում են ցրում-սփռվածության և ավերումի գեղարվեստական նշաններով՝ «հոգիս ըրած հազար մաս»¹ «և ցրվեցի մաս առ մաս/Ամեն անկյուն, ամեն տեղ կյանքիս խորիուրդն ու գանձեր(24), կործանված տաճար, «կիսակործան

* Հոդվածն ընդունված է տպագրության 11.03.2020 թ.:

1 Մուշեղ Իշխան, Երկեր, Բանաստեղծ., արձակ, դրամատուրգիա, գրականագիտ., Կազմեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Վ. Գաբրիելյանը, Երևան, «Նաիրի», 1990, էջ 21: Այստեղ և այսուհետ Մուշեղ Իշխանի հիշյալ ժողովածուից բոլոր մեջբերումները կարվեն նշված գրքից՝ փակագծում նշելով էջը:

որմ»(36), լրանալու կամ լիովին կործանվելու անկարող անավարտ տան պես «անավարտ կյանքեր»՝ հողակույտ շիրիմներից առավել ցուրտ ու մռայլ (42), արյունոտ խորշակներից ցիրուցան եղած մի ափ մոխիր (47), «ամբողջ ազգ մը անտուն կ'ոգևարի մաս առ մաս»(52), «Ավերակ տունը»(53-54), «օրերու փլատակ»(56), «հարազատ խումբն անցյալի մեր մեծ տոհմին քարուքանդ» (58) և այլն: Պատկերաշարն ամբողջանում է անկանգ ցրումի, անկայան հեռացման, անհանգրվան մեկնումի գեղարվեստական ինքնօրինակ համարժեքի՝ «կյանքեն, մահեն աքսորյալ» քարավանի հայտնությամբ, որը սփյուռքահայ իրականության մեջ **Այն** «հեռավոր կարավանի» և «հալածական երթի» «մեկ բեկորն է միայն» (54-55): «Հայկական հյուղավանը» բանաստեղծության մեջ այդ ցրում-սփռումը զգացողական մակարդակով համակում է բնագրի խորհրդապատկերային ողջ ներքին տարածությունը՝ ավազի՝ սորումի և փշրումի նշաններով: Հյուղավանը հարազատ աշխարհի ճանապարհը մոռացած քարավանի անկասելի ընթացքի մեջ ժամանակավոր մի հանգրվան է՝ տուն չէ, հայրենիք չէ: Հատկանշական է նաև կյանքի անապատում ցուցացող օազիսի պես «մեծափարթամ քաղաքի պայծառ տեսիլքի» հայտնությունը, բայց ավերված է մինչև անգամ այդ տեսիլքը՝ տան երազը: Երազի ավերումը վերջնական կործանում է, ուստի քաղաքի երազն ու տեսիլքը վերաշինելու պատգամ է «Անապատին մեջ կյանքի» բանաստեղծությունը:

Ցրում-սփռվածության և ավերումի դիտարկված նշաններին օրինաչափորեն հակադրվում են հավաքումն ու կառուցումը: Կառուցման մտասևեռումը առանցքային իրողություն է ժողովածուի կերտվածքում («Նոր շինվող տունը», «Հայաստանի բանվորներուն», «Վաղվան տունը» և այլն): Եվ ահա, տունը նախ և առաջ հավաքումի, կերտումի և լրումի խորհրդապատկերային նշանն է դառնում, ապա և գաղափարահոգեբանական ասոցիատիվ բռնկումներով բառավորվում որպես սեր-տուն (իր համար տուն է դառնում սերը, սիրո մեջ է ապրում ու գոյում քնարական հերոսը), հոգի-տուն (հոգու և հյուղակի պատկերներն են նմանադրվում այս դեպքում, հերոսն ու սփյուռքահայ բեկորված հավաքականությունը իր հոգու տան բնակիչներն են՝ որպես անձի մեջ պատասպարված ազգային հիշողություն ու գաղափար, ոգեղեն կորիզում պարփակված բովանդակություն), գինետունն է պատկերավորվում իբրև տան բացակայություն, մեծարենցյան շեշտով ու խորքով հայտնվում է մարդ-

տուն զուգահեռը, ապա և կորուսյալ հայրենիք-տուն ցավագին հուշը և մայր-տուն հարակցումը՝ իբրև հորհրդային Հայաստանի պատկերով հառնած հայրենիքի կարոտ: Սերը՝ իբրև տուն, հոգին՝ իբրև տուն, մարդը՝ իբրև տուն, հայրենիքը և մայրը՝ որպես տան խորհրդապատկերներ, և, վերջապես, տունը՝ իբրև քերթված («Պիտի կերտե՛մ ես կրկին քեզ քերթվածի մը նման» («Վաղվան տունը», 57)), և տունը՝ որպես երգ («Հայաստանի բանվորներուն»): Այս վերջին հարակցումը դուռ է բացում դեպի մշակութաբանական խոր ու ծանրակշիռ շերտեր: Նա տանը փորձում է «մոտենալ» տարբեր կողմերից՝ կարծես ի վերջո ասելու համար հենց սա, որին բնականորեն պիտի հաջորդի «Հայ լեզուն տունն է հայուն» (26) հանրահայտ ձևակերպումը:

Ավերմանը հակադրելով կառուցումը՝ Մուշեղ Իշխանը տան պատկերավորումը գրեթե միշտ հագեցնում է ձայնային նշաններով, լռության և խոսքի զուգակշռումով: «Համերգ» վերնագրով առաջին բանաստեղծությունը դիմառնության հնարքով ձևակերտված ուշագրավ կառույց է. այստեղ էլ մարդ-տներ են կամ տուն-մարդիկ՝ որը խեղճ ու բազմատանջ, ուր կքած, որը գորշ ու հիվանդկախ, ալևոր կամ նորահաս, որը բոլորից խռով, մի կողմ քաշված, որը թաղի տիրոջ ու իշխանի դիրք ու դիմագծով, և այս պատկերային «բազմաձայնության», համերգի մեջ լսվում է նույն ու նման պատմության՝ աշխարհի չափ հին երգը՝ տան մեջ ապրվող կյանքը, որը պատկերահաջորդման օրինաչափ նշաններով՝ «սիրո մահիճ, օրորոց, հացի սեղան ու դագաղ» (22), հնչում է որպես երգ, կյանքի երգ, և այդ երգն է երգում ամեն տուն, իր վառված լույսերի «բառերով ու մեղեդիով» «հնչում» է ամեն տուն: Այս քերթվածի ցավագին հանգուցալուծումը հայտնի է («Եվ մինչ ամեն-ամեն՝ մարդ աշխարհի մեջ ունի բույն.....//Հայու Որդին, ե՛ս միայն կը թափառիմ հոս անտուն» (նույն տեղում)), սակայն մշակութաբանական թափանցումի դուռը բացվում է դեպի տուն-ձայն-երգ-խոսք հարակցաշարը: «Հայ մամիկին աղոթքը» քերթված-աղոթքում հնչում է աղոթքի կորսման տաճաարը, մարդկային գոյության և կենսապատումի անհրաժեշտ նշանների շրջումով հայտնակերպվող կարգակառույցի խախտումը («ծիծաղն է լաց, երբ մարդուն չի տար իր տունն արծազանք» (22)): Սեփական տան մեջ մարդկային ձայնի արծազանքի պարզ պատկերը առանձնահատուկ իմաստավորում է ստանում ժողովածուի գաղափարահոգեբանական ընդհանուր մթնոլորտում. տունը

չի «խոսում» մարդու հետ, օտար տունը լռում է՝ ի պատասխան: Այստեղ էլ ահա կրկին հարազատ, հայրենի տան բացակայությունը հայտնակերպվում է լուրջամբ, խոսքի չգոյությամբ, երկխոսության անհնարինությամբ: Այս դեպքում ևս հատկանշական է տուն-ծայն-խոսք հարակցաշարը: Մեկ այլ քերթվածում («Նոր շինվող տունը») հարակցվում են տան կերտումն ու խոսքի կառուցումը, խոսքաշարի կերտվածքը՝ բյուրեղանայով ճարտարապետական լուծումների նշանային համակարգի ներդաշնակության մեջ. «Հագած մարմին ու հոգի՝ ահա՛ անշունչ քար ու հող/Կը բարբառին պերճորեն»(25): «խոսք խոսքի մեջ», «տեքստ տեքստի մեջ» սկզբունքն իմաստային ուրույն դաշտով աշխատում է խոսքի ու երգի պես կառուցվող ու հնչող տան մեջ բառերի և տաղերի հնչումով: Այդպես «Տուն մը» քերթվածում ճերմակ տան «հոսումն ու նրբակերտ գծերեն» հառնում է անուշ մեղեդին (51): Ձայնային նշանն է ամբողջացնում նաև «խրճիթը» բանաստեղծության խորհրդապատկերային կառույցը (դարձյալ տունն և տան մեջ հնչող աղոթք)՝ «Տան մը երագը» գործում դառնալով «բառերի հանդարտ տարափ» կամ «վճիտ ծայնի անմար արձագանք»(32-33): Սփյուռքահայի գոյությունը Մուշեղ Իշխանը «անոք ու անճիչ»¹ է համարում սակայն («Իմ տուն, իմ մայր» (56)):

«Տուներու երգը» ժողովածուում «Լերան տունը», «Ձորի տնակը» և «Անտառին հյուղը» բանաստեղծություններում, Մուշեղ Իշխանը բացում է նաև ազգային հոգեբանության, ճակատագրի ու գոյակերպի, կենսահայեցողության՝ առանձին միջտեքստային նշաններով դրսևորվող Նուրբ շերտեր: Առաջինում լեռան կատարին թառած ժայռակուռ, հպարտ տան և վերելքի դժվարությունը հաղթահարող հերոսի պատկերային լուծումը մի շերտով բացում է ազգային պատմական գոյության, մաքառման, հարատև վերելքի՝ թունանյանական և շիրագյան նշանավոր կերտումները հիշեցնող մթնոլորտը, մյուս շերտով շեշտադրում «հին կուռք ու հին ընկեր ուրանալու»(45), գոյության բանաձևը մասնակիորեն վերանայելու, Նորոյի ատել ու գթալ, ապրել սովորելու անհրաժեշտությունը, որը փակվում է անհուսության նշանով՝ աշխարհի ունայնության գիտակցումով: «Ձորի տնակը» ասես «հաշտ ու խաղաղ մարդ-

¹ Այստեղ օրինաչափորեն զուգահեռվում է Վարուժան Ոսկանյանի «Ծշուկների մատյանը» վեպի առանցքային խորհրդաբանությունը՝ լռող, շշուկի վերածվող բառի պատկերը, որը վեպի հեղինակի կողմից հակադրվում է Նարեկացու «Մատյան»-ում առկա ողբալու երբեմնի ազատությանը:

կոպայն» մասին երազանքի սփյուռքյան ձևակերտումը լինի՝ ճորի տնակում ապրող մանուկների խաղաղ գոյությանը զուգահեռվոր կորուսյալ տան հուշ-պատկերով: «Անտառին հյուղը» քերթվածում «միափեղկ, նեղ լուսամուտից» աշխարհին նայող քնարական հերոսի աչքերով սփյուռքյան գոյությունը, սփյուռքահայի հոգին ներկայանում են իբրև սարսափով ու գազաններով լեցուն անտառի խորքում կծկված, քաղաքակրթական զարգացումներից հեռու շարտված «փակ հյուղ»՝ «միշտ անժպիտ, միշտ անլաց» նույն դեմքերով՝ գերեզմանի մեջ կենդանի թաղված, միայնակ, լքված. «Ան կ'ապրի մահ և ամեն օր կը մեռնի...» (40-41):

Ժողովածուի քննաբանված պատկերաշարը, դիտարկված տուն-ծայն-խոսք-աղոթք-երգ-քերթված հարակցաշարի բանաստեղծահոգեբանական հոսքը, արդեն հիշատակված՝ տան կերտումն ու խոսքի կառուցումը հանգուցալուծվում են «Հայ լեզուն տունն է հայուն» քերթվածում, ուր լեզուն է արդեն դառնում տան խորհրդապատկերային համարժեքը, հայտնակերպվում իբրև «վեհություն, գեղ ու պերճանք» ունեցող ճարտարապետական կերտվածք, հանճարեղ «ճարտարապետների» դարավոր տքնանքի արգասիք: Մուշեղ Իշխանը լեզուն դիտարկում է իբրև ազգային հավաքական կեցության տուն, հոգու և ինքնության՝ տարածությունից ու ժամանակից վեր հավիտենապես գոյող բնակարան, օտարության մեջ՝ հարազատ ավագան:

Հայ գեղարվեստական մտածողության մեջ տան խորհրդապատկերն առկա է իր ողջ հնարավոր իմաստային դաշտերով՝ տուն-տիեզերք («Հոգիս տանը հաստատվել» սկսվածքով թումանյանական քառյակի բանաստեղծահոգեբանական մթնոլորտը, Իսահակյանի՝ «Տիեզերքի սահմաններից դուրս գայի» երազանքը), տուն-աշխարհ («Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է» սահյանական ձևակերպումը: Սա հասկանալիորեն պատկեր-զգացողություն է, սակայն ամենևին պատահական չէ Հայաստան-տան հնչման ներագրումով բառավորված այդ զգացողությունը), բնականաբար տուն-հայրենիք/կորուսյալ հայրենիք (հայրենական և սփյուռքյան այսօրինակ հայտնակերպումները բազմաթիվ են), տուն-քարանձավ¹ (ազգային ներփակ, ինքնանույնական գոյումի

¹ Տե՛ս Լ. Սեյրանյան, Անիմայի գաղափարագեղագիտական հարացույցը Լևոն Խեչոյանի «Միերի դռան գիրքը» վեպում | «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2019 № 2 (29), էջ 20-36, Քարանձավը որպես գոյաբանական ավագան և փակուղի արդի հայ պոեզիայում, «Էջմիածին», 2019, հատոր Դ, էջ 101-121:

պատկերային փոփոխակ), «չկորցնելու համար»՝ ազգային տուն-հայրենիքը սրտում տեղավորելու և այդպես տեղից տեղ տանելու իրողություն, անցյալը՝ ծերացած մոր և ապագան՝ նորածին զավակի պես իր ներսում հոգու տանն ամփոփելու, ազգային եսի-ի տարածությունը անձի սահմաններում սեղմելու և պահպանելու իրողություն (Հովհաննես Գրիգորյան, Աղասի Այվազյան («Արմինուս»)), տարածահոգեբանական կրճատում-սեղմումը աշխարհի քարտեզի վրա արցունքի կաթիլի հասցնելու գեղարվեստական հատկանշական պատկեր (Հովհաննես Գրիգորյան): Պատկերազգացողական թվարկված փոփոխակները՝ տիեզերական անսահմանությունից մինչև անհետացման ձգտող կետը, որը կորստի և հուշի ծանր լիցք ունի, շոշափում են ազգային ու համամարդկային, հայի և աշխարհի, մարդու և աշխարհի առնչության տարաբնույթ եզրեր: Տան բացակայությունը դիտարկվել է իբրև գոյության հենարանի բացակայության, ինքնության կորստի փոխաբերություն, որպես խախտված կարգակառույցի՝ քաոսայինի նշան¹: Մեզ այստեղ առավելապես հետաքրքրում է ազգային ճակատագրով պայմանավորված, մասամբ նաև ազգային խառնվածքով հիմնավորված՝ հայի՝ հոգու տանը կամ ոգու տանը բնակվելու պարտադրվածություն-նախապատվության ֆենոմենը, հուշի, երագի և գաղափարի մեջ պատասպարվելու, արտագաղթելով կամ մշտանույն սպասման մեջ ապագայի մասին երագելով, հարթմնի երագի մեջ՝ գեղարվեստական իրականություն կերտելով՝ ազգային իրականությունից փախչելու երևույթը: Բազմաթիվ բնորոշումներ կան՝ «Մեր գրականությունը մեր հայրենիքն է»², «...երբ պետությունը չկար, պետությունն ապաստանած էր գրականության մեջ (դեռ Րաֆֆու, Աբովյանի ժամանակներից)»³, «Մենք»-ի հանգանակի՝ նպատակայնորեն հատկանշական «արվեստի հողին վրա բարձրացնել մեր ժողովուրդը, որպեսզի դիմանա, մինչև որ իր իսկական հողը գտնի բնակարան կանգնելու համար»⁴ ձևակերպումը և ազգահավաքման՝ Ցեղապանությանը նախորդող տեղյանական և «Մեհյան»-ական մշակու-

1 Զ. Հովհաննիսյան, Տան բացակայության փոխաբերությունը արդի հայ արձակում, Գրականագիտական հանդես, 2004, № 4, էջ 186-196:

2 Հ. Օշական, Համապատկեր, հատոր Դ, Երուսաղեմ, տպարան Սրբոց Հակոբեանց, 1956, էջ 152:

3 Հր.Մաթևոսյան, Գրականության բաց դարպասներ. պաշարված ժողովուրդ, https://hrantmatevossian.org/hy/works/id/grakanutian_bac_darpa_sner_pasharyac_joxovurd

4 «Մենք», Փարիզ, 1931, №1:

թային շարժում-միտումները: Լեզու-գրականություն պայմանական և ուղղակի համատեքստում («...բայց մեր լեզվումը թե՛ եսպես բաներ ըլին, թո՛ղ աչքս հանեն¹» արվեստական ըմբռնմամբ), սփյուռքի մտահոգությունների ծիրում միանգամայն բնական էր Մուշեղ Իշխանի «Հայ լեզուն տունն է հայուն» պատկեր-գաղափարը, որի քննաբանման ազգային շերտն օրինաչափորեն շոշափում է գոյապահպանման մտահոգությանն ուղղված նախընթաց լուծումներ՝ սկսած Վահան Թեքեյանի ըմբռնումներից և գեղարվեստական իրագործումներից, «Մենք»-ի հանգանակի հիմնադրույթների դիտարկումից մինչև մասնավորաբար Վազգեն Շուշանյանի չափածո, արձակ և խոհագրական երկերի համար նշանակալի հայրենի կորուսյալ տան հիշատակի և վարձու սենյակի ցավագին իրողության հակադրությունը:

Թեքեյանի «Տաղ հայերեն լեզվին» քերթվածում «դալարագեղ պոքրակի», պարտեզների և լեզվի համեմատական եզրերի շարքում կա նաև «հայրենի պալատի» պատկերը՝ պետության, ազգային տան դարավոր գոյության իմաստով, որին հարակցվում է «Եկեղեցին հայկական» նշանավոր բանաստեղծության մեջ եկեղեցին հայ հոգու ծննդավայր անվանելու պատկերը: Մուշեղ Իշխանի պոեզիայում նկատելի է բանաստեղծական ժառանգորդման այս երակը, սակայն ուշագրավ մեկ այլ զուգահեռ ևս կարելի է նշել: 1927 թվականին Վազգեն Շուշանյանն ի՞ր տուններու երգն է հնչեցրել խոհագրական արձակի էջերում «Տուներ, տուներ» գրույթում²: Շուշանյանական տարակերպ տների շարքում նկատվում է գյուղական, բնաշխարհիկ «հիւրընկալ ու արձակ դռներով, պարտեզներով», «խարխլած ու ծանրաբեռնուած տանիքներով, որ արևը կօծե», «անդորր ու չուռռական», «կիսակործան որմերով» կամ «այգիի մը գոգը նետուած», նաև «հիանդ, այլեւ ծեր» տների և «երկնակարկառ, զարմնալի, խառնագնաց» քաղաքային տների հակադրությունը: Իր գեղակերտած ու պատկերագրած «տուները» ուշագրավ խաչաձևումով հարակցելի ու ժառանգորդման լեզվամշակութային հոսքով նմանադրելի են ոչ միայն Մուշեղ Իշխանի՝ արդեն հիշատակված բազմադեմ ու տարակերպ, նաև մարդակերպ տներին, այլև ժառանգորդման հակադարձ սլաքումով՝ չարենցյան «մթում

1 Խ. Աբովյան, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1984, էջ 7:

2 Վ. Շուշանյան, Խառնիխուռն (Բնագիրը հրատարակության է պատրաստել և առաջաբանը գրել Ն. Հարությունյանը), Երևան, ԳԱՐ, 2001, էջ 176-178:

կորած խրճիթներին»։ Ի դեպ, լեզվի համաբույրային ներվայելման չարենցյան հանրահայտ ձևակերտումն իր հերթին սնվում է թեքեյանական մատնանշված ավագանից¹ («Մեյ մեկ պըտուղ գոյնըգոյն՝ ամբողջ բառերըդ ահա, // Հիպե՛ղ բառերըդ՝ զոր որքա՛ն հասունցուցին արեմներ²»)։ Չարենց-Շուշանյան զուգահեռն ամբողջացնում են «տոմեր ծխապատ»՝ «մեր հազարամեայ երկրին գիտերուն մեջ», «տոմեր, որ հագիւ արարչական լոյսը կընդունին», «մուգ, հողմածեծ հայու տոմեր», «ծիւնի դեզին տակ», «հալածուելով գոռ մրրիկէն» պատկերները, որոնք հիշեցնում են հայտնի «մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև» և «ծմեռվա վիշապաձայն բուքը վսեմ» փառահեղ բնորոշումները։

Գեղարվեստական պատկերի քառակողմ խաչածնումը կառուցակազմվում է Թեքեյան-Չարենց-Շուշանյան, Թեքեյան-Մուշեղ Իշխան, Չարենց-Շուշանյան-Մուշեղ Իշխան սլաքամներով։ Եվ չնայած այլ է չարենցյան «հնամյա քաղաքների հազարամյա քարը», սակայն գյուղ-քաղաք հակադրությունն առկա է ինչպես Չարենցի, այնպես էլ Շուշանյանի և Մուշեղ Իշխանի համապատկեր կերտումներում։ Չուգահեռաբար դիտարկելի են վերջինի «Հսկա շենքի մը դիմաց» քերթվածի անհարազատ քաղաքի «մեծդի հսկայի շեղջակոյտը» և պարզամիտ հայ գեղջուկի՝ դրան հակադրվող՝ «հայրենի պարզուկ տունը», «հյուղի արևոտ պատերը» և շուշանյանական տների վերոնշյալ համարժեք հակադիր պատկերները, նաև երկու հեղինակների գեղարվեստական լուծումներում երբեմն առկա սոցիալական անհավասարության ենթաշերտը։ Հատկանշական օրինաչափությամբ հարազատի և օտարի հակադրությունը Չարենցի պոեզիայում ևս հայտնակերպվում է տան խորհրդապատկերի երևումով՝ «Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով... Ա՛նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով³»։

Շուշանյանի քնարական հերոսն ապրում է գեղարվեստի տարածության մեջ կերտված ու վերակերտված հուշերի տանը, հայրենի կորուսյալ լայնախարիսխ ու ծաղկահեղց, ընդարձակ տունը տեղափոխվում է վերհուշի, երագի ու տեսիլի ներհայեցողական իրականություն՝ հակադրվելով սեկյակ, խուց կամ ննջարան անունը կրող

1 Տե՛ս Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 34։

2 Վ. Թեքեյան, Տաղ հայերեն լեզուին, Յիսուն քերթում, Պեյրուբ, 1995, էջ 26։

3 Եղ. Չարենց, Տաղ անձնական, երկերի ժողովածու 4 հատորով, հատոր I, Երևան, «Սովետական գրող», 1986 թ. էջ 251։

օտար, վարձու կացարաններին: Շուշանյանն այդպես դառնում է սեփական գրի տարածքում կենդանություն առած տան բնակիչը՝ աչքերը փակ՝ հաճախ, շատ հաճախ, գրեթե միշտ վերադառնալով տուն, ներս, հետ, այնտեղ, պատկերացնելով ու այդու՝ պատկերելով միակ ունեցած տունը՝ կորուսյալը, հետագա ամբողջ կյանքում ապրելով ոգեղեն տարածքում, լեզվով վերակերտված տանը, լեզվի տանը:

Ոգու տանը բնակվելու և վերաբնակվելու պարտադրվածության-նախապատվության՝ ազգային գիտակցության և կեցության մեջ առկա սույն իրողությունը Շուշանյանի գուրգուրանքի և դատապարտման առարկան է եղել միաժամանակ: «Ներքին դաշտանկար» երկի խոհազգացական տարուբերումների մեջ Շուշանյանի գրիչը շոշափում է նշված երկու եզրերը: Հայրենական երգի հնչումով «աքսորական արքայի պես» վերադառնում է հայրենիքը և վերահաստատում իր թագավորությունը: Շուշանյանը, «ապաստանում է» գրաբարի «հնաբույր, մագաղաթա» բառերի մեջ. «Հայոց լեզվի շնորհիվ էր, որ ամիսներու ընթացքին հայրենիքի գաղափարին ու այս անոք և խղիճի տղուն միջև, որ ես էի,- նետված գաղափարներու տարազնաց քառուղիներուն վրա,- հաստատվեցավ մնայուն ու անքակտելի կապ մը»¹: Բայց ահա սկսվում է կռիվը գրքերի՝ «վերացական գաղափարներու այս մոխրակույտին» «հեղձուցիչ դեզ»-ի դեմ (հիշենք Նաև Թեքեյանի «Գիրքեր»-ը), որի մեջ մինչև մեր վիզը «խրած ենք»՝ մեր «արյան հաղթական տենդը» կորցրած. «Ո՞ր է հնամյա ու վավերական երկիրը, որ կրնա խարխիս ծառայել այս փչող բաներուն»²: «Բառերով կերակրեցինք հայոց այս սակավապետ ու հառաջապահ ժողովուրդը ամբողջ տարիներ: Ու երբ ան սկսավ զարթնուլ, ուրիշ բառերով օրորեցինք զայն: Բառերով հեղափոխություն կընենք ամեն օր.... Բառերով երկիր մը կառուցինք ու այդ երկիրը ընդարձակ էր ու կը տարածվեր ափե ափ, ծովե ծով: Ու երբ երազը փլավ, կրկին ձեզի ապաստանեցանք մեր անկարելի արդարացումին համար»³: Բառերը կանգնած են մեր և հորդահոսան կյանքի միջև: «Կյանքի այս ալեկոծ տարերքին դեմ ձգեցեք մեզ ազատ ու մերկ»⁴,-ամփոփում է Շուշանյանը⁵:

1 Վ. Շուշանյան, Ներքին դաշտանկար, Ձեռագիրը հրատարակության պատրաստեց և առաջաբանը գրեց բ.գ.թ. Ս. Փանոսյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 1995, էջ 20:

2 Նույն տեղում, էջ 39:

3 Նույն տեղում, էջ 42:

4 Նույն տեղում, էջ 43:

5 Այս ըմբռնումները Շուշանյանն արտահայտել է դեռևս «Մենք»-ի

Մենք հաճախ իրականությունից պաշտպանվում ենք բառերով ու վերացական գաղափարներով, իրականությունից փախչում և պատասպարվում ենք լեզվի տարածքում ամրագրված ազգային-հայրենասիրական հզոր ու բեղուն կոնտեքստում առկա՝ տեղապտույտի տանող, իրականությունից կտրված, իրենց սպառած որոշ վերամբարձ գաղափարների կաղապարներում կամ այլուր, անդին, Նյութական անծայրածիր տարածություններում ցայսօր անկանգ սփռումի մեջ: Բառերի ճակատամարտում հաղթելով՝ պարտվում ենք իրական կյանքում, մեզ օրոքում ազգային-հայրենասիրական երգով օտարության մեջ կամ հայրենիքում: Պատասպարվում բառերի ամրոցում կամ թաքտում բառերի թակարդում:

Նկատված և արդեն Նշված տան պատկերը և դրան գրեթե միշտ հարակցվող ձայնային Նշանը՝ լռության և խոսքի զուգակշռումը, Մուշեղ Իշխանի բանաստեղծական մտածողության մթնոլորտում հայտնակերպվում են հիշատակված տուն-ձայն-խոսք-աղոթք-երգ-քերթված հարակցաշարի բանաստեղծահոգեբանական հոսքով, որի վերջնահանգրվանը, ինչպես արդեն Նշվեց, տուն-լեզու ընդհանրացումն է: Լեզուն առհասարակ, Նաև ազգային լեզուն իհարկե ոգեղեն տարածություն է (Վիլիելմ Հումբոլդտը լեզուն համարում էր այն տաճարը, ուր բնակվում է ազգի ոգին՝ դարձյալ շրջանառելով լեզու-տուն, այս դեպքում տաճար՝ աստծո տուն զուգահեռը, Նա լեզուն համեմատում է Նաև մարդու կամ ժողովրդի շուրջը գծված շրջանի հետ, որի միջից հնարավոր է դուրս գալ միայն այլ շրջանի մեջ մտնելու դեպքում¹), ուր պահպանվում են Նյութական տարածության մեջ առկան, բայց Նաև արդեն կորուսյալը, հիշողությունը, կերտվում և մոդելավորվում է ապագայի տեսիլը: Պատահական չէ, որ բան-խոսքը, բանականությունն ու դրա բառապատկերային թաղանթավորումը մարդու վերնատանն է տեղավորում և բնակեցնում ժողովրդական մտածողությունը: Պատահական չէ «վերնատուն» բառի ընտրությունը:

Երևույթի՝ սփյուռքյան իրականության մեջ կարևորվող ազգային չափումը դիտարկման միակ և վերջին հայեցակետը չէ: Մուշեղ Իշխանի «Հայ լեզուն տունն է հայուն» գեղարվեստական բանաձևը ինքնատիպորեն հարակցվում է գերմանական գոյապաշտության

առաջին համարում «Կը պարսավեմ բառերը» վերնագրով գրույթում:

1 См. u В. Гумбольдт, О различии строения человеческих языков и его влиянии на духовное развитие человечества // Избранные труды по языкознанию, М., Прогресс, 1984:

Ներկայացուցիչ Մարտին Հայդեգերի «Լեզուն կեցության տունն է»¹, «մարդկության ողջ մշակույթի գիրկը» բնորոշմանը: Որևէ այլ բանում աշխարհն այնքան ներկա չէ, որքան լեզվում: Վաղնջական ժամանակներում աշխարհի խոսքը քամու ձայնն էր, ջրի ճողվյունը, ծառերի սոսափյունը: Աշխարհն արտահայտվել է ուզում և մարդուն է դիմում, մարդու կարիքն է զգում արտահայտվելու համար²: Մա՛րդը կարող է բառ տալ, խոսք տալ աշխարհին: «Բանաստեղծը հանդգնում է բառի վերածել աշխարհի», - ձևակերպում է Ս.Ստեփանյանը, - «լեզվի մեջ բացվում է հիշողության աշխարհը»՝ պահպանվելով և հիշվելով բառի մեջ³: Տարբերակելով և հակադրելով գիտական ճանաչողությամբ ըմբռնելի իրականությունը և ապրումի միջոցով, ինտուիտիվ ճանաչողությամբ զգայելի կեցությունը՝ իբրև իրականության խորհրդավոր, նվիրական բովանդակություն, Հայդեգերը տազնապում էր կյանքի հոգևոր նախասկզբի կորստի համար (Այս համատեքստում է ըմբռնելի նաև Տերյանի Նշանավոր «Հոգևոր Հայաստանը»): Ըստ Հայդեգերի՝ «եվրոպացիները մոռացել էին կեցությունը հանուն իրականության», ուստի նա դնում է կեցությանը վերադառնալու, իրականությունն իր բացահայտ և խորհրդավոր բովանդակության ամբողջականության մեջ վերապրելու ունակությունը: Գոյաբանական հերմենևտիկայի խնդիրը կեցությանը ունկնդրելն է, և քանի որ լեզուն կեցության տունն է, «մարդկության ողջ մշակույթի գիրկը», հետևաբար գեղարվեստական երկը «կեցության լուրն է»: Այն ձևավորվում է երկու բևեռներից եկող հոսքերի արդյունքում: Դրանցից մեկը աշխարհն է՝ հեղինակն ու պատմական իրականությունը, մյուսը՝ լեզուն, բառը, որոնք կրում են «կեցության լուրը», ամբարված մշակութային փորձը, ավանդույթը: Առաջինը բացահայտն է, երկրորդը՝ զաղտնի, առաջինը մարմինն է, երկրորդը՝ ոգին: Դիտարկելով Մուշեղ Իշխանի օրերի սփյուռքյան իրադրությունը՝ նկատում ենք հետևյալը. աշխարհը կորսված է, երկիրը չկա, հարազատ իրականությունը չկա, պարտադրվող իրականությունը մերժելի է, աշխարհից եկող հոսքը փակ է կամ փակվում է գիտակցաբար, դրա փոխարեն սկսում են աշխատել հիշողությունը, հուշի սրբագործված եզերքը, բացակայող մարմնին փոխարինում են տեսլապատկերը՝ այլևս անգո իրակա-

1 St' u M.Хайдеггер, Письмо о гуманизме, Перевод В. В. Бибихина, http://phil.ulstu.ru/files/studentam/2.2_haid_hum.pdf

2 Նույն տեղում:

3 Ս. Ստեփանյան, Ժամանակի երկու ընթերցում, Երևան, «Սարգիս Խաչենց Փրինսիփո», 2009, էջ 24-25:

նության ոգեղեն պատճենը, կորուսյալ աշխարհի հուշը, որը գոյում է լեզվում կրկին, և մյուս կողմից՝ լեզվից՝ մշակութային ավանդույթից եկող հոսքը դառնում է միակ հնարավորը: Ահա այսպես են Մուշեղ Իշխանի գեղարվեստական մտածողության մեջ ձևակերտվում տունը իբրև քերթված, քերթվածը իբրև տուն, այդպես է հայ լեզուն՝ մշակույթը և մշակութային ավանդույթը, դառնում տունը հայուն, և այդպես է հայը, օրինակ՝ Մուշեղ Իշխանի «Կիլիկիո արքան», վերաբնակվում երազի տանը, գոյում իբրև ոգու տան բնակիչ: Մարդու և իրականության, մարդու և աշխարհի խզումը, պարտադրված անցանկալի, դարեդար անփոփոխ իրականության մերժումը, ինչպես արդեն Նշեցինք, Նաև հայրենիքում են հայտնակերպվում կամ արտագաղթով և կամ էլ վերացական, երազակերտ ցանկալի իրականության մեջ, անցյալի կամ ապագայի բառակերտ տեսլարանում վերաբնակվելու այլընտրանքով:

Երերացող արժեքների հարափոփոխ աշխարհում կեցության տուն որոնելու մտասևեռումը համամարդկային կշռույթ ունեւորումնական-քառասունական թվականներին: «Նամակ հումանիզմի մասին» գրույթում Հյուդեռլինի «Վերադարձ տուն» բանաստեղծության կապակցությամբ Հայդեգերն անդրադառնում է «Նոր եվրոպացու» տնանկությանը՝ «Տնանկությունը դառնում է աշխարհի ճակատագիրը»¹ ձևակերպումով: Համանման կենսազգացողության ներազդմամբ, ապա և ազգային ճակատագրի Նստվածքների արդյունքում է թերևս աշխարհ եկել Վահան Տերյանի՝ դեռևս դարասկզբին՝ ենթադրաբար 1906 թվականին գրված «Կյանքի որբերը», «ես անջատված եմ հայրենի հողից» (1908), ապա և Առաջին աշխարհամարտի օրերին՝ 1915-ին և 1917-ին գրված «Մենք բոլորը, բոլորը// Մանուկներ ենք որբ.....Ո՞վ կըփրկե, ո՞վ կըգա,//Որ տանի մեզ տուն» տողերով² և «Երկու դժբախտ մանուկ»³ սկսվածքով բանաստեղծությունները: Աշխարհի, օտարի կանչ-դյութանքի, ազգային տնից, ազգային լեզվից հնարավոր մեկնումի և վերադարձի ծանոթ գեղարվեստական պատկերների, Ուլիսի, Նվարդի (հայերենի) և Շամիրամի (օտարի, տվյալ դեպքում, ինչպես գիտենք, ռուսերենի) միֆոլոգեմների առկայությունը տերյանական պոեզիայի այս շերտի ըմբռնման հետաքրքիր դիտանկյուն են բացում, որը տեղավորվում

1 St´u M.Хайдеггер, Письмо о гуманизме, Перевод В. В. Бибихина, http://phil.ulstu.ru/files/studentam/2.2_haid_hum.pdf

2 Վ. Տերյան, Բանաստեղծություններ, Երևան, «Լույս», 1982, էջ 151:

3 Նույն տեղում, էջ 157:

Ե նույն լեզու-տուն շրջածիրում, որի սահմաններում կարելի է ընթերցել նաև «Կարծես թե դարձել եմ ես տուն» սկսվածքով քերթվածը՝ տուն-մայր-պարզկա լեզու-հեքիաթ-իլիկի ձայն-«խոսք» հարակցաշարով: Ի դեպ, այս առումով հետաքրքիր են նաև Շահնուրի «մեկ-նումը» և «վերադարձը»:

Աշխարհից ու թերևս նաև ազգային ավազանից օտարված լինելու համոզմունքն ի դեպ կարող է դրսևորվել նաև սեփական լեզվում ու ցանկացած լեզվում օտարական լինելու զգացողությամբ: Կարեն Սվասյանն իր իսկ վկայությամբ «լեզվաբանական օտար» է զգացել իրեն «հասանելի բոլոր լեզուներում»: «Ես այդ լեզուներից ոչ մեկի մեջ, որոնցով գրում և հաղորդակցվում եմ, այդպես էլ չսովորեցի ինձ զգալ, ինչպես տանը»¹: Իմ կյանքի բանաձևը. ես օտարերկրացի եմ»², - հայտարարում է նա, թեև փորձում է դա բացատրել պրոպագանդային և դեյոդային ոճաբանական բարդ բանաձևումներով՝ գրի ինքնատիպությունը պայմանավորող լեզվական զարտուղությունները համարելով յուրատեսակ օտար լեզու:

Լեզուն՝ իբրև մշակութային գոյը պատասպարող ու պահպանող երևույթ, լեզվով կազմակերտված ու կազմակերպված ազգային-գաղափարական-գաղափարախոսական կառույցը՝ որպես ինքնանույնականությունը պահող, զարգացման խոր հորիզոն բացող կամ առանձին պահերի զարգացումն արգելափակող իրողություն, դիտարկելով ազգային բանաստեղծական ավանդույթից սնվող Մուշեղ Իշխանի և Վազգեն Շուշանյանի հարակցվող ու տարամիտվող պատկերային մտատեսության ծիրում հանգում ենք հետևյալ եզրակացությանը. և՛ ազգային շաղ եկած մարմնի ու ազգային ցրիվ եկած տիեզերքի, և՛ մարդկային բզկտված էության ապաստանն էի լեզուն է, մարդու վերնատանը³ բնակվող Բանը՝ ոգու բնակարանը՝ կեցության թերևս միակ չփուլավոր տունը: Եվ մենք բոլորս, բոլորս ի վերջո ու նախ և առաջ... ոգու տան բնակիչներ ենք:

1 Կ. Սվասյան, Հոգվածներ, Երևան, «Անտարես», 2014, էջ 4:

2 Նույն տեղում, էջ 5:

3 Այս համատեքստում առանձնակի խորքով է բացվում թումանյանական «Վերնատան», «Վերնատուն» անվան խորքային բովանդակությունը: Հարցի թումանյանական ընկալման համիմաստ խրթերանգ է բացահայտում նաև նրա «Անզին քարը» հեքիաթի՝ «Թագավորը ժպտաց, ապա թե մտքի տունն ընկավ» (այսինքն՝ սկսեց մտածել, մտախոզվեց) արտահայտությունը (Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հատոր 5, Պատմվածքներ, Հեքիաթներ, Թարգմանություններ, Փոխադրություններ, Սևագիր և անավարտ էջեր, Երևան, 1994, էջ 322):

Լիլիթ Սեյրանյան – Գիտական հետաքրքրությունների առանցքում հայ Նորագույն գրականության պատմության և տեսության, Սփյուռքի գրականության խնդիրներն են: Անդրադարձներ է կատարում արդի գրականության հիմնահարցերին: Հետաքրքրությունների շրջաժիրում են նաև արդի գրականագիտական ուղղությունները, մշակութաբանական հարցեր: Գիտական մամուլում հրապարակել է չորս տասնյակից ավելի հոդվածներ:

ЛИЛИТ СЕЙРАНЯН: ЖИЛЬЦЫ ДУХОВНОГО ДОМА: МУШЕГ ИШХАН И ВАЗГЕН ШУШАНЯН: В статье в контексте национальной поэтической традиции рассматривается символический образ дома в сопоставляемых художественных решениях Мушега Ишхана и Вазгена Шушаняна в свете реалий армянской диаспоры. При помощи семиотического анализа исследуются национальные и общечеловеческие, эстетические и философские аспекты символического образа дома в параллели с известным хайдеггеровским изречением. Рассматривается механизм формирования спектра значений данного образа как проявление национального характера, как феномен воздействий национальной судьбы и геополитических сдвигов, как предпочтение и принуждение жизни в языке - в духовном доме.

Ключевые слова : духовный дом, Мушег Ишхан, Шушанян, язык, Хайдеггер, национальный характер, национальная судьба, армянская диаспора.

LILIT SEYRANYAN: RESIDENTS OF THE SPIRITUAL HOUSE: MUSHEGH ISHKHAN AND VAZGEN SHUSHANYAN: The article in the context of the national poetic tradition examines the symbolic image of the house in the comparable artistic decisions of Mushegh Ishkhan and Vazgen Shushanyan in the light of the realities of the Armenian diaspora. Using semiotic analysis, we study the national and universal, aesthetic and philosophical aspects of the symbolic image of the house in parallel with the famous Heidegger dictum. The mechanism of the formation of the spectrum of meanings of this image is considered as a manifestation of a national character, as a phenomenon of the influence of national fate and geopolitical shifts, as a preference and compulsion of life in a language - in a spiritual house.

Key words: spiritual house, Mushegh Ishkhan, Shushanyan, language, Heidegger, national character, national fate, Armenian diaspora.

REFERENCES

- Abovyan Kh, Yerker, Yerevan, «Sovetakan grogh», 1984.
- Charnec Y., Yerkeri zhoghovatsu 4 hatorov, hator I, Yerevan, «Sovetakan grogh», 1986.
- Gabrielyan V., Spyurqahay grakanutyun, Yerevan, EPH, 2016.
- Haydegger M., Pismo o gumanizme, http://phil.ulstu.ru/files/studentam/2.2_haid_hum.pdf
- Hovhannisyan K., Tan bacakayutyan pokhaberutyune ardi hay ardzakum, Grakanagitakan handes, 2004, № A, ej 186-196.
- Humboldt V., O razlichii stroeniya chelovecheskikh yazikov i yego vliyani na dukhovnoe razvitie chelovechestva//Izbrannie trudi po yazikoznaniyu, M., «Progres», 1984.
- Ishkhan M., Yerker, Yerevan, «Nairi», 1990.
- Matevosyan Hr., Grakanutyan bac darpasner, pasharvac zhoghovurd, https://hrantmatevossian.org/hy/works/id/grakanutian_bac_darpasner_pasharvac_joxovurd
- Oshakan H., Hamapatker, hator D, Yerusaghem, tparan Srboch Hakobyanc, 1956.
- Seyranyan L., Animai gaghaparageghagitakan haracuyce Levon Khechoyani «Mheri dran girqe» vepum, «Banber Yerevani hamalsarani. Banasirutyun», 2019, № 2 (29), ej 20-36.
- Seyranyan L., Qarandzave vorpes goyabanakan avazan yev pakughi ardi hay poeziayum, «Ejmiatsin», 2019, hator D, ej 101-121.
- Shushanyan V., Kharnikhurn, Yerevan, GAT, 2001.
- Shushanyan V., Nerqin dashtankar, Yerevan, EPH, 1995.
- Stepanyan S., Zhamanaki yerku entercum, Yerevan, «Sargis Khachenc. Printinfo», 2009.
- Svasyan K., Hodvatsner, Yerevan, «Antares», 2014.
- Teqeyan V. Hisun qertvats, Beyrut, 1995.
- Teryan, Banasteghtsutyunner, Yerevan, «Luys», 1982.
- Tumanyan H., ELZH, hator 5, Yerevan, 1994.